Գևորգ Էմին

Կրկին նույն փայլն է

Կրկին նույն փայլն է,
Նույն սև թավիշը,
Բայց արդեն ա՛յլ ես,
Արդեն ուրիշ ես.
Այնպես փոխվա՛ծ ես,
Այնքան օտար ես.
Կարծես անցածը
Ամբողջ մի դար է:

Մի՞թե այս ձեռքն է,
Որ ես շոյել եմ,
Մի՞թե այս երգն է,
Որ ինձ թովել է.
Մի՞թե աղոտած
Այս աչքե՛րն են… պիղծ,
Իրենք քուն մտած,
Զրկե՛լ ինձ քնից…

Կրկին նույն փայլն է,
Նույն սև թավիշը,
Իրա՞վ դու ա՛յլ ես,
Իրո՞ք ուրիշ ես,
Թե՞ նույն հրա՛շքն ես,

Բայց կյանքն ուրիշ է,-
Դավում է ա՛չքը,
Խաբում է հո՛ւշը…